

ԽԵԼԱԳԱՐՆԵՐԻ ՏԱՆԸ

(Դ. Պ ի ն ս կ ու լ)

Ինձ համարում էին խելագար և մատով էին ցոյց տալիս. տեղեկանում էին իմ առողջութեան մասին և այդ ժամանակ նկատում էին, որ ես շատ վատ տեսք ունեմ, որ ես դեղին եմ ինչպէս մոմ, որ ինձ անհրաժեշտ է դիմել բժշկին: Գիտեմ, որ նրանք ակնարկում են իմ դատողութեան մասին, բայց դա իմ գործը չէ: Այդ ինձ երբէք չի վրդովում:

Շնորհակալութիւն յայտնելով տուած խորհուրդների համար, ես առաջ եմ գնում իմ ճանապարհով և կամ, տեղումս մնալով, նայում եմ հեգնական ժպիտը շրթունքներին ուղիղ խորհրդատուի աչքերին, մինչև որ նա կը շփոթուի և կամ թէ վախեցած կը շտապի հեռանալ: Այն ժամանակ ես ծիծաղում եմ ու ծիծաղում: Այդ ինձ շատ բաւականութիւն է պատճառում: Ինձ շատ հաճելի է այդ անգործներին անյարմար դրութեան մէջ դնելը:

Անպիտաններ... Նրանք ինձ խելագար են հռչակում և այդպիսով հանգստացնում են իրանց խիղճը:

Նրանք ծիծաղում էին իմ հին, դեղնած, արդէն մի քանի տեղից ճաքճաքուած գլխարկի վրայ:

Նրանք ծիծաղում էին իմ հին ու պատառոտուած անդրաժարտիկի վրայ, որի տակից երևում էին կեղտոտ շապիկս և մերկ ու անլուայ մարմինս: Նրանք դիտում էին ինձ, ծիծաղում էին և խղճում: Քեզ մարդ, բոլորովին խելագարուել է:

Այդ ինձ կատաղեցնում էր:

«Ձեր ինչ գործն է», գոռում էի ես, ինչիւ էք դուք ինձ խղճում, ինչիւ ձեզ չի յուզում, ձեր խիղճը չի շարժում ձեր բանողորմների տեսքը, որոնք անիւներ են պտտացնում, ածուխ են կրում: Զէ՛ որ նրանց մարմինն էլ է երևում պատառոտած ու կտոր կտոր եղած անդրաժարտիկի տակից, իսկ շապիկ բոլորովին չունեն նրանք:

Հոկտեմբեր, 1906.

«Բանուորները, մըթմըթում են նրանք, աղքատ են չեն կարող գնել, և նրանք ստիպուած են ցնցոտիներով ման դալ-իսկ դժւ»:

«Իսկ Բա... Հարուստ եմ... Ո՞րտեղից... Ինչո՞վ, նրանով, որ հայրս ուրիշի քրտինքով է կապիտալ աշխատել»:

«Այ, այ—ընդհատում են նրանք ինձ—իսկապէս դու խե-լազարուել եմ: Դու...»:

Բայց ես այլևս նրանց լսել չեմ կարողանում: Բռնում եմ գլուխս, ամուր սեղմում եմ քունքերս և վազում եմ ու վազում: Ես չեմ կարող տեղումս մնալ, արիւնը եռում է իմ մէջ, սիրտս պատրաստ է կրծքիցս դուրս թռչել, և ձեռներս էլ քոր են գալիս: Մի րոպէ ես և նա ձեռքիցս կենդանի չէր պրծնի: Ո՛չ... նա կենդանի չէր մնայ: Ես կը բաշքէի, կը ճրթէի, կը կրծէի, ծուկի-ծուկի կ'անէի և կրծքիցս դուրս կը վիժէին ան-միտ և վայրենի աղաղակներ... Բայց ես գերադասում եմ փախչել:

2.

Ես հարուստ եմ... Հօրս համար աշխատում էին հարիւ-րաւոր մարդիկ, որոնք ոտները հագիւ էին փոխում և՛ հագիւ էին պահում իրանց գոյութիւնը, իսկ նա, հայրս, օրէցօր աւե-լի և աւելի էր հարստանում, չնայած, որ նա շատ էր տարւում և քէֆերում փողեր էր փչացնում: Եւ երբ մտածեց աւելի հարստա-նալու համար սնանկանալ, նա արձակեց բանուորներին և մասը, որոնք արդէն հետևեալ օրը ոչինչ չունէին ուտելու: Եւ ես պի-տի օգտուեմ այդ փողերով... Միթէ դրանք ի՞նձ են պատկա-նում... Մենք հարուստ ենք... Տէրերը նրանք են, այդ ան-բախտները, թշուառները, տգէտները:

Նրանց են պատկանում իմ հօր փողերը: Ամեն մի գրօշ, որ ես ստանում եմ հօրիցս, ես պարտաւոր եմ նրանց տալ թէ-կուզ ինձ մորթէք, թէկուզ ինձ սպանէք. թէկուզ օրական ինձ հարիւր անգամ խելագար անուանէք: Խելագար... Հա՛, հա՛, հա՛: Յաճախ էի ես լսում, թէ ինչպէս նրանք ասում էին: «Ահա կարծես թէ նա բոլորովին առողջ կերպով է դատում, բայց և այնպէս նա, խեղճը, խելագար է»: Հա՛, հա՛, հա՛, Երբէք նրանք չէին կարող ներողամիտ լինել դէպի ինձ այդ դառը ճշմարտու-թեան համար: Ես ծիծաղում էի ուղղակի այդ զղուելի դատար-կախօսների վրայ դէմ առ դէմ... Իսկ ծիծաղից կողերս բռնում էի, իսկ նրանք շփոթւում, վախենում էին: Հա՛, հա՛, հա՛:

3.

Իսկ նրանք, այդ թշուռները, ինձ իսկապէս վշտացնում էին և վշտացնում՝ են դեռ ևս մինչև այսօր: Նրանք նոյնպէս ինձ մի քիչ աննորմալ էին համարում:

Այդ մասին նրանք ինձ չէին ասում, այդ ես հասկանում էի նրանց վարմունքից, դէպի ինձ ունեցած վերաբերմունքից: Նրանց բարի, ընկերական ձայնի մէջ ես լսում էի ափսոսանք, զգում էի ցաւակցութիւն: Այդ ինձ սպանում էր: Իմ խեղճ եղբայրներ: Ես խելագար չեմ, հաւատացէ՛ք ինձ: Ինչո՞ւ էք դուք ինձ վիրաւորում: Իմ աչքերում երևաց արտասուքը, ես ամբողջովին դողում էի: Նրանք աշխատում էին հանգստացնել, բայց նրանց իւրաքանչիւր խօսքի մէջ ես զգում էի ցաւակցութիւն դէպի խելագարը!

Շեղբայրներս, կրկին բացականչեցի ես յուսահատութեամբ, միթէ մեքենաները այնքան մեռցրել են ձեր մէջ եղած ամեն կենդանութիւն, որ դուք նայում էիք ինձ վրայ, ինչպէս մի խելագարի վրայ:

Նրանք երգում էին, որ ինձ հասկանում են, բայց ես նրանց չէի հաւատում և չեմ հաւատում:

Նրանք ցանկանալով մխիթարել խաբում էին ինձ:

Ես մտածում եմ ու ժպտում... Ինչպէս երջանիկ կը լինենք մենք, ես և նրանք, երբ վերջապէս նրանք ինձ հասկանան:

4.

Երեխաները իմ յետևից չէին վազում, ինձ վրայ քարեր չէին շարժում, բայց նրանց վախկոտ, հետաքրքիր և միևնոյն ժամանակ ծաղրական հայեացքից, այն բանից, որ ինձ ճանապարհ տալով խուսափում էին ինձանից, ես հասկանում եմ, որ նրանք ինձ խելագար են համարում: Այդ վիրաւորանքից քիչ էր մնում արտասուէի, ցաւալի կերպով այդ ինձ դառնացնում էր: Ա՛խ: Ինչպէս կը ցանկանայի նրանց առաջ բաց անել հոգիս, ուղեղս, բացատրել նրանց իմ ամբողջ վերաբերմունքը դէպի նրանց հայրերն:

«Երեխաներ, եկէ՛ք ինձ մօտ»:

«Երեխաներ, ես չեմ կծում, ես ոչ ոքի ֆլաս չեմ տալիս»:

«Երեխաներ, կեանք, ճշմարիտ կեանքն եմ կրում իմ մէջ: Իմ բոլոր երակներիս, ուղեղիս իւրաքանչիւր բջիջի մէջ նա է գտնւում»:

Երեխաներ, ինձ մօտ եկէք, այդ կեանքի մասին ես ձեզ գեղեցիկ հեքիաթներ կը պատմեմ: Ձեզ անհրաժեշտ է այդ ուսուցնասիրել, որովհետեւ նոր էք սկսում ապրել: Միրելի երեխաներ...»

Բայց ես իզուր էի ասում: Երեխաները ինձանից վախեւնում էին:

5.

Միայն նա էր ինձ հասկանում և միայն նա էր իմ մխիթարանքս: Միրելին, անգլին, ես ինչպէս կարօտում եմ քեզ: Գրունեչկա, ալաւնեուկս, ահա, ահա տեսնում եմ ես քեզ: Բրբր... Ես երեւի կը ճեղքեմ պատերը և կը սկսեմ վազել դէպի քեզ, իսկ թէ ոչ... եթէ ոչ կը պատուել, կը ճայթի սիրտս...

Դէհ, դէպի գործ: Յենուիր ապակուն—շարդենք... Բայց ոչ, սուս, սուս, պահապանը դալիս է փայտը ձեռին. սուս, սուս, 22, սուս, խելօք տղայ...

Ահա, ես կապուած եմ: Ինձ կապկպեցին... Ուռուկ, Գրունեչկա: Ինձ համար ծանր է, Գրունեչկա, ես ինձ շատ վատ եմ զգում, Գրունեչկա:

Օ-օ, Գրունեչկա: Նա ինձ լաւ էր հասկանում: Նա ինձ խելագար չէր համարում: Օ՛, ո՛չ, ո՛չ: Բոլորովին ո՛չ: Ընդհակառակն, նա բոլորի հետ վիճում էր իմ պատճառով: «Դուք ինքներդ էք խելագարուել», իմ փոխարէն պատասխանում էր նա: Գրունեչկա:

6.

Նա գերձակունի էր, իր ազգականների համար աշխատում էր, իսկ ինքը շապիկ էլ չունէր մարմնի վրայ: Ինձ համար ցաւալի էր, երբ ես նրա վրայ էի նայում: Ես ցանկանում էի, որ նա ման գար նոր շորերով, մաքուր շապիկով: Նա ծիծաղում էր ինձ վրայ. «Դու իսկական մարդ ես»:

Մի անգամ ես իմ ողորմելի դրոշներէց մի քիչ փող բերի նրան, որպէսզի նա շապիկների համար քաթան առնի: Բայց նա ինձ դուրս վռնդեց: «Դու զգուելի էգօխտ ես», բարկացած ասաց նա:

Այն ժամանակից ես նրան մի խօսք էլ չէի ասում. բայց նրա պատառուն շորերը, նրա կեղտոտ շապիկը դանակի նման խրում էին սրտումս:

Գուցէ իսկապէս ես էգօխտ եմ: Բայց ես ուրիշ կերպ լինել չեմ կարող. նա ինձնից ուժեղ է, ես վախենում էի նրանից: Մինչև անգամ երբ նա խնդրում էր ինձնից իմ շապիկը լաւանալու համար ես վախենում էի և չէի կարող մերժել: Ես փորձեցի, բայց յանդիմանութիւն ստացայ: Հա՛, հա՛, հա՛: Նա

սուր լեզու ունի. տասը փաստաբան նրա հետ չէին կարողա-
նայ վիճել, — ու-ու-ու, Գրունեկիւս Արդեօք մենք երբեք էլ
տեսնուեմք: Օ՛, այո՛, այո՛ Շղթաների մէջ էլ լինեմ, դարձեալ
գուրս կը պրծնեմ: Ահա այսպէս. — ու-ու-ուժ գործադրենք: Մի-
այն սուս, կամաց:

7.

Բոլորը նրան տգեղ էին համարում — ինքն էլ նոյն կար-
ծիքն ունէր: «Այդ ինչպէս է որ դու ինձ սիրում ես, — ասում էր
նա — չէ որ ես տգեղ եմ»: Ես ծիծաղում էի: Ի՞նչպէս թէ տգեղ:
Դրանով նա միայն ինձ գրգռում էր:

«Հաստ շոթունքներ, մեծ աչքեր և երկար քիթ», սկսում
էր նա իր պակասութիւնները համարել:

«Որտեղից գտար: Սոստ է: Այդ շիշտ չէ:

Ես աչքերս չէի հեռացնում նրանից: Ես գիտեմ, որ երբ
օր. Խաղկելիւիլը իմ մօտով անցնում էր՝ ես զգում էի, կար-
ծեմ գարշելի սողուն էի տեսնում... Ես խոյս էի տալիս նրանից:
Իայց բանաստեղծները չեն դադարում գովաբանել նրա գեղեց-
կութիւնը: Եւ բոլորն էլ գոչում են, որ քաղաքի մէջ նա ամե-
նագեղեցիկն է: Նրանց ամեն բանը թարս է: Ուրիշի աշխա-
տանքը նրանց հարստութիւնն է, իսկ ես — խելագար: Հմ,
հմ, հմ:

8.

Ես չէի կարող արհեստաւոր դառնալ: Իմ ոչ մի գործը
կարգին չի գնում. ես ուզում եմ մեկը խփել, բայց նա մուր-
ճի հարուածների տակ ծովում է և էլ ներս չի գնում: «Մի-
քեզիս, մտիւր պատի մէջ, ցցուիր տախտակի մէջ», սկսում եմ
ես աղաչել, բայց նա տեղից էլ չի շարժւում: Ես սկսում եմ
բարկանալ և քիչ է մնում որ նրան կրծոտեմ: Իսկ նա — չէ ու
չէ: Գրպաններս լիքն էին մեխերով. ես խփում եմ որտեղ որ
պատահի, բայց բոլորովին էլ իզուր: Ոչ և ոչ. այդպէս է մինչև
այսօր:

Ասեղի մէջ թել անցկացնելն էլ ինձ չէր յաջողում: Կար-
ծեմ թելը դիւրամբ ինձ գրգռում էր: Տեսնում էք, ասուեմ էր
ինձ դերձակը, և ստեղծ վայրկենապէս թելում էր. իսկ
իմը — չէ, ու չէ:

«Դուք անպէտք էք աշխատանքի համար», ասում էր ինձ
ամեն մի բանուոր: Աւելի լաւ կը լինէր որ նա մի դանակ
խրէր իմ սիրտս... Մէկ անգամ նոյնիսկ վճռեցի կացնով գլուխս
ջախշախել, հիւսնի մօտ եղած ժամանակս: Ես ուզում եմ խը-

փել այստեղ, իսկ կացինը Աստուած գիտէ թէ որտեղ է կըպ-
չում: Ես ցանկանում եմ դիպցնել այնտեղ, նա ուրիշ կողմ է
թռչում: Ես արդէն ուզում էի... բայց ձեռիցս կացինը խլե-
ցին:

9.

Ես անիծում էի ինձ և իմ ձեռները: Եւ այդպիսի ահագին,
եքա մարդը ոչ մի բանի պէտքական չէր: Իսկ առժամանակ ես
ստիպուած էի կեւակրուել հօրս սեղանից, հացից՝ ձեռք բե-
րուած քաղցած բանուորների աշխատանքով, թրջուած նրանց
արիւնով:

Ես սկսեցի մտածել ինքնասպանութեան մասին և առա-
տաղի վրայ ինձ համար մի օղակ պատրաստեցի: Ես արդէն ու-
նէի պարանո՞ւ Բայց երբ օղակը գցում էի, յանկարծ ցանկացայ
գնալ նրա մօտ, նայել նրա վրայ, նստել նրա մօտ: Ես էգօրիստ
եմ! Գլխովս այս միտքն է անցնում. մնաս բարեւ ասել նրան:
Եւ ես գգում եմ, որ առանց նրան ինձ ծանր է... Եւ ինձ տիրեց
անչափ տխրութիւն, անչափ դատարկութիւն, անչափ թախիծ:
Ես դէն եմ շարտում պարանը և ինչպէս խենթ վազ եմ տալիս
նրա մօտ:

«Գրունեչկա, գիսմա», դիմում եմ ես նրան, «ես արդէն
օղակը կապել եմ, բայց դու թոյլ չես տալիս»...

«Ի՞նչ, բացականչեց նա» և աչքերը լայն բաց արաւ:

«Վերջ տալ կեանքիդ», մըթմըթացի ես:

«Դու խելագարուել ես»:

«Ես ոչ մի բանի պէտքական չեմ»:

Նա բարկացած նայեց ինձ վրայ:

«Դու յիմար ես», պատասխանեց նա շեշտելով ամեն մի
խօսքը:

«Բայց, Գրունեչկա»:

«Եթէ ուզեն, կարող եմ: Հող են քանդում, քար եր կրում,
փողոցներն են աւելում... գտնում են աշխատանք: Կեանքին վերջ
տալ...»

Ես չթողի նրան վերջացնել, ես յանկարծ իմ մէջ զգացի
ոյժերի նոր հոսանք և իմ փոքրիկ, համարեան երեխայական
ձեռներս ինձ թուացին բաւական ուժիդ ամենածանր աշխա-
տանքի համար:

«Այո, Գրունեչկա», բացականչեցի ես, այդպէս էլ կը լինի,
մինչև ես չսկսեմ աշխատել, քո աչքին չեմ երևալ: Եւ ես
դուրս վազեցի տանից: Եւ միայն նկատեցի, թէ ինչպէս նա

շարժեց իր գլուխը, ի նշան համաձայնութեան: Նա դեռ բարկացած էր!...

10.

Ես վազում էի, թռչում էի, ուղիղ դէպի էփանագին ճաշարանը: Կէս օր էր: Բանուորները ճաշում էին: Նա կանգ առայ դռան մօտ, նայում էի, թէ ինչպէս են նրանք ուտում իրանց աղքատիկ ճաշը, որը կազմուած էր հոտած կաղամբից: Իմ առաջին մտածումնքն էր նրանցից աշխատանքի մասին հարցնել: Երևի ես վատ տեսք ունէի, որովհետեւ իւրաքանչիւրը կանգ էր առնում և ինձ էր նայում: Ինձ մօտեցաւ քրքրուած շորերով մի մարդ, մեկնեց ինձ կոշտերից ուռած իր կեղտոտ ձեռքը և տուեց ինձ իննը հատ հատ կոպէկանոց: Ես քարացայ, ես կորցրի ինձ:

«Ո՛չ», մըթմըթացի ես չվերցնելով փողը, «ո՛չ, ինձ փող հարկաւոր չէ... ես քաղցած չեմ... շնորհակալ եմ...»

Բայց յանկարծ ես ընկայ նրա վզով և սկսեցի համբուրել: «Տէւր, տէւր, եղբայր, քո արիւնով աշխատած այդ գորշները: Ես նրանք մի քսակի մէջ կը լեցնեմ և ինչպէս յուսուած (թախսման) իմ կրծքիս վրայ կը կրեմ: Ո՛չ, ես պիտի վազեմ փողոցներով և պիտի ցոյց տամ բարերար անուն կրող բոլոր արիւնաբոուներին, բոլոր տգորովներին, ձրիակերներին: Տէւր, ես դրանք պիտի կոխեմ նրանց աչքերը»:

Ես խլեցի փողերը նրա ձեռքից և սկսեցի վազել:

Իմ յետևից մէկը գոռաց. «Այ խելագար»: Իսկ ես վազում էի ու վազում: Բայց յանկարծ ես մտածեցի որ իմ պատառուտած շորերով բարերարը կարող է այն կարծիքը կազմել որ ես խելագար եմ: Ես յետ վազեցի...

Նա խելապէս նայում էր ինձ վրայ, ինչպէս խելագարի վրայ:

«Ո՛չ», ասացի ես նրան. «ո՛չ, սո՛ւտ է, սո՛ւտ... ես խելագար չեմ... հաւատա ինձ... սուտ է... ես նորմալ եմ: Մենք կը բարեկամանանք, հա՛: Դու ինձ կը հասկանաս... Ասա ինձ միայն ո՞վ ես դու»:

«Ես ամեն մի աշխատանք յանձն եմ առնում, ես փեշակ ունեցող բանուոր չեմ»:

Միտքս լուսաւորուեց, սիրտս բաբախեց:

«Ասա ինձ դու ի՞նչ ես անում: Նոյնը կարճիկ եմ ես կատարել»:

«Այո, ինչու չէ: Իմ գործը ամենքը կարող են անել»:

Քիչ ֆնաց որ ես ուրախութիւնից վեր-վեր թռչէի:

Նա մի շինութեան վրայ հասարակ բանուոր էր—աղիւս, ջուր, աւազ էր կրում: Եւ կպայ նոյն գործին:

11.

Առանց յետ նայելու եւ վազեցի նրա մօտ, հէնց որ ստացայ առաջին փողերը:

«Գրուշենկա, Վայ!, բացականչեցի եւ և ընկայ նրա վրով:

«Ա՛յ, այդպէս կտրիճ», ասաց նա ինձ և փաղաքշեց իմ մազերը. և նրա մեծ, բարի, խելօք աչքերը արտայայտում էին սէր, կրակոտ սէր դէպ ինձ:

«Ա՛յ, տէճնո՛ւմ ես, ուղում էիր մեռնել», յանդիմանեց ինձ նա մեղմ կերպով:

Իմ շունչս կտրւում էր: Եւ բախտաւոր էի, ուրախութիւնս ից շփում էի ձեռներս և ծիծաղում... Եւ նրա ձեռները վերցրի և դրի իմ իններիս մէջ, նրա դիմաց նստեցի և սկսեցի պատմել նրան, թէ ինչպէս պատահեց այդ բոլորը:

«Գնանք, նրան ինձ ցոյց տուր», բացականչեց նա, լսելով իմ պատմութիւնը:

Եւ րոնցի նրա ձեռքը և երջանիկ ժպիտով ոկսեցի վազել: «Երկուան էլ խելագարուել են», զօռում էին մեր յետևից, բայց մենք սեղմում էինք միմիանց ձեռքը:

«Հա, հա, հա, Գրուշենկա. ահա ես քեզ տեսնում եմ. ճ, իմ սիրելիս...»

«Մենք պէտք է բոլորս միասին ապրենք», հարցրի եւ նրան:

«Ո՛չ», պատասխանեց նա. «պէտք չէ: Եւ կ'ապրեմ մերոնց հետ... Իսկ դուք երկուսովդ ապրէք միասին: Եղէք եղբայրներ... յաւիտենական եղբայրներ!...»

Ու-ու-ու, Գրուշենկա...»

12.

Մենք լսեցինք նրան: Մենք քարձանք եղբայրներ: Միասին էինք ապրում, միասին աշխատում, միասին ուտում, բաժանում էինք ամեն մի կտոր հացը: Աշխատանքից յետոյ նա գալիս էր մեզ մօտ, կամ թէ չէ մենք էինք գնում նրա մօտ, և եւ երջանիկ էի, անչափ երջանիկ...

Սկզբներում ծնողներս ընձ հանգիստ չէին տալիս, ուժով կամենում էին տուն տանել: Բայց եւ հաստատ էի կանգնած: Վերջապէս նրանք յոյսները կտրեցին ինձանից և եւ ոկսեցի ազատ շունչ քաշել: Մեր կտրի տակի փոքրիկ սենեակը թւում

էր լայն դահլիճ՝ մեծ և ընդարձակ։ Ինչպէս լաւ կեանք էր։ Վայելը։ Նա շարութ և տօն օրերը կարգի էր բերում սենսակը։ Նայելը դուրեկան էր։

Գործս աջող էր գնում—ահա բոլորը։ Միշտ աշխատանք ունէի և սկսեցի օգնել հօրս բանուորներից ամենաչքաւորներին։ Խեղճերը չէին ուզում վերցնել... Խեղճեր, սիրելիներ, յիմարներ... Ձէ հր ես վերադարձնում եմ այն, ինչ որ իրաւամբ նրանց է պատկանում... Իւ իրանք նոյնպէս ցանկանում են նուիրել... Եւ երբ նրանք չէին վերցնում, ես այդ ծածուկ էի նրանց հասցնում... Ես բախշաւոր էի։

13.

Վերջին անգամ արտասովոր մի շոգ օր ես աշխատում էի իմ ընկերոջ հետ։ Արեն այրում էր. բացի այդ մենք աշխատում էինք գետնածիրութի վրայ։ Ընկերս իրան վատ զգաց, նա ուշադնաց կղաւ, նրան տարան տուն։ Ես քնացի նրա հետ մենակ և չգնացի աշխատանքի։ Երեկոյան նա աւելի վատացաւ, իսկ փող—մի կոպէկ էլ չկար։ Ես գնացի մեր վարձողատիրոջ մօտ։ Դա բարձրահասակ, հաստափոր, երկար սիւրտիւկ հագած ծերունի մի հրէայ էր։

«Այն բանուորը, որը այսօր հիւանդացաւ.—ասացի ես— իրան շատ վատ է զգում, իսկ մի կոպէկ էլ փող չունի։ Պէտքէ բժիշկ հրաւիրել։ Նա խնդրում է որ դուք նրան մի քիչ փող տաք. նա դրա փոխարէն կ'աշխատի ձեզ համար»։

«Ես նախօրօք փող չեմ տալիս», հանգիստ պատասխանեց երկար սիւրտիւկաւորը և ուզում էր գնալ։

Ես նրա ճանապարհը կտրեցի։

«Առաջինը, որ մենք աշխատել ենք համարեան կէս օր։ Եւ յամենայն դէպս փոխարէն կ'աշխատենք։ Մարդը մեռնում է, խղճացէք... ես կ'աշխատեմ դրա փոխարէն...»

«Ես քեզ ասացի որ առաջուց փող չեմ տալիս», խիստ կերպով ասաց ինձ հաստափորը։

Արիւնը խփեց գլուխս, սիրտս ուժգին բաբախեց, չգիտեմ որտեղից, ձեռս մի մեծ քար ընկաւ։

«Ահա, ուրեմն քեզ», գոռացի ես ոչ իմ ձայնով։ Քարը դժբաղդաբար անցաւ կողքովը։ Ես յարձակուեցի նրա վրան... Ես գոռում էի փրփուրը բերնիս... Ֆլշացնում էի, ոռնում էի... Կծում էի, կտրտում, սեղծում, չանդռում։ Հեշտ չէր պոկել նրան ինձանից։ Ինձ տարան ոստիկանատուն։ Հայրս ինձ իսկոյն ազատեց։ Նա պնդում էր, որ ես խելագար եմ։ Ապացուցանելու համար դրեց մի թղթադրամ։

14.

Միւս օրը ես ազատուեցի հօրիցս, և փախայ մեր տունը: Ընկերս պառկած էր յատակի վրայ ծածկուած սև վերմակով: Նրա մօտ կանգնած էր նա և լաց էր լինում... Սենեակը լիքն էր հարկան բանուորներով... Բոլորն էլ տխուր էին... Ես կարծում էի կը խելագարուեմ... Ես ընկայ յատակի վրայ, փետում էի մազերս, կրծոտում էի ձեռներս, ծիծաղում լալիս էի...

«Դու հար էիր գնացել... հարցրեց Գրուշեան ինձ: «Ո՞րտեղ էիր անյայտացել, նրան կարելի էր ազատել: Հարկաւոր էր իսկոյն և եթէ կանչել բժշկին»: «Ուշ եկանք մենք, ուշ», արեւարացան իմ միւս հարկանները: Եկանք այն ժամանակ երբ նա արդէն հողեարքի մէջ էր,—կանչեցինք բժշկին, բայց նա այլևս չէր կարող օգնել...»

Ես նրանց չէի լսում... Ես վազեցի վարձատիրոջ մօտ... Ինձ մահ, նրան էլ մահ: Բայց իմ դժբախտութիւնից և նրա բախտից նա ինձ տեսաւ և հրամայեց բռնել: Ես հազիւ ժամանակ ունեցայ քարը շարտել դէպի նա: Եւ դիպցրի Դիպցրի նրա հաստ փորին... հմ, հմ, հմ: Կարծես նաղարի, մեծ թմրուկի դիպաւ... Նա կծկուեց ցաւից և բարձր հառաչեց... հմ, հմ, հմ... Այդ ինձ համար ամենալաւ երգեցողութիւնն էր:

Ինձ բռնեցին: Մի ինչ որ երկաթէ ձեռք բռնել էր իմ ուսիցս և վարձատէրը մնաց կենդանի:

Ես ինձ այդ չեմ ների...

Ես ստոր եմ... Հայրս ինձ բերեց այստեղ խելագարների տունը... ես գոռում էի որ ես խելագար չեմ... Թո՛ղ ինձ դատեն... Ես կախաղանի արժանի եմ, թող ինձ գնդակահարեն, թող ջրախեղդ անեն: Այնպիսի օրիկան էր... Ուռ-ուռ!!...

15.

Բայց ինչո՞ւ ինձ մօտ չեն թողնում Գրուշին... Գրուշին ինչո՞ւ չեն թողնում...

Բնադիրը հրէերէն, ռուսերէն թարգմանութիւնից փոխադրեց Վ. Վ.